ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի հուլիսի 20-ի թիվ 360-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 20-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի մարտի 26-ի N 384-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 21-րդ և 22-րդ կետերը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի տարածքում «Բուսաբուծության աջակցության 2026 թվականի» ծրագրի շրջանակներում մոնիթորինգի իրականացման հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի նախագահին՝

2.1 2026 թվականի ընթաքում մինչև բերքահավաքը իրականացնել ընտրանքային մոնիթորինգ ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներկայացուցչի մասնակցությամբ՝ մոնիթորինգի ընդգրկելիության նվազագույն շեմ սահմանելով համայնքի շահառուների թվի առնվազն 20 %-ը:

2.2 2026 թվականի մոնիթորինգից հետո առավելագույնը 1 ամսվա ընթացքում ամփոփել իրականացված ընտրանքային մոնիթորինգի արդյունքները և ծրագրի 20-րդ կետով նախատեսված ձևաչափով ներկայացնել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Պարտականությունները կատարող՝

Recoverable Signature

Signed by: HOVHANNISYAN MILADA 6914980608

X

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2026թ. հուլիս ք. Աշտարակ

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզպետի 2026թ.
Հուլիսի 10- N 360-Ա
որոշման

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ
«ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ»
ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ա.Ղազարյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ /հանձնաժողովի նախագահ/

Կ.Հայրապետյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության խորհրդական

Ա. Շուխյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ

Գ. Հարությունյան- Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ

Թ. Թովմասյան- Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ

ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար՝

Recoverable Signature

X

ՀՐԱՉՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Signed by: GEVORGYAN HRACHYA 2014650144

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ